2008-2009 թվականներին հարկային մարմնի կողմից կատարված ստուգումների վիճակագրություն

Հարկային մարմնի կողմից կատարված հարկային ստուգումների ընդհանուր քանակը 2009թվականին ավելացել է մոտ 82 տոկոսով, մինչդեռ ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարները նվազել են մոտ 25 տոկոսով: Աղյուսակ 1-ում ներկայացված են 2007-2009թթ հարկային մարմնի կողմից կատարված և ստուգումներով լրացուցիչ առաջադրված գումարների դինամիկան:

Աղյուսակ 1

	2007	2008	2009
Հարկային մարմնի կողմից կատարված ստուգումների քանակը, հատ	16219	15515	28310
Ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարների, մլրդ դրամ	24477	42358	32187
Մեկ հարկային ստուգման արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարների, մլրդ դրամ	1.51	2.73	1.14

Ընդ որում, հաշվի առնելով, որ հարկ վճարողների թիվը մոտ 152 հազար է , իսկ ակտիվ հարկ վճարողներինը՝ մոտ 81 հազար, ապա **2009թվականին միջին հաշվով ստուգում է կատարվել ամեն 5-րդ հարկատուի և ամեն 3-րդ ակտիվ հարկատուի մոտ**:

Հետաքրքրական է նաև ստուգումների քանակի և ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարների դինամիկայի բացվածքը ըստ հարկատուների երեք խմբերի՝ խոշոր հարկատուների, մինչև 58.3 մլն դրամ տարեկան իրացման հասույթ ունեցող հարկատուների և մնացած մյուս հարկատուների:

Աղյուսակ 2

	Ստուգումների քանակը, հատ		Ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարները,մլն դրամ	
	2008	**2009**	**2008**	**2009**
Ստուգումներ, ընդամենը	15515	28310	42358.6	32187.1
ՀԴՄ կանոնների ստուգումներ	6433	11020	457.75	915.5
Մինչև 58.3 մլն դրամ շրջ. Հարկատուների մոտ	11317	18741	16856.0	13434.2
Մինչև 58.3 մլն դրամ շրջ. հարկատուների մոտ կատարած ՀԴՄ ստուգումների	6062	10432	431.2	837.9
Մինչև 58.3 մլն դրամ շրջ. Հարկատուների մոտ, առանց ՀԴՄ ստուգումների	5255	8309	16425	12596
325 խոշոր հարկատուներ	611	805	9495.7	6580.5
325 խոշոր հարկատուների մոտ ՀԴՄ ստուգումների	39	11	1.8	1.8
Մյուս հարկատուներ	3587	8764	16007	12172
Մյուս հարկատուների մոտ ՀԴՄ ստուգումների	333	577	25	76
Մյուս հարկատուների մոտ, առանց ՀԴՄ ստուգումների	3255	8187	15982	12097

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, ընդհանուր ստուգումների թիվը ավելացել է ավելի քան 82 տոկոսով, այդ թվում խոշոր հարկատուներինը մոտ 30 տոկոսով, մինչև 58.3 մլն դրամ շրջանառություն ունեցող հարկատուներինը մոտ 70 տոկոսով, իսկ մյուս բոլոր հարկատուների մոտ 250 տոկոսով:

Միևնույն ժամանկ, հարկատուների 3 խմբերի մոտ ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարները **նախորդ տարվա համեմատ նվազել են 2-3 անգամ:**

Աղյուսակներ 3-ում և 4-ում ներկայացված է խոշոր հարկատուների և մյուս բոլոր հարկատուների ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարների համեմատականը նրանց վճարած հարկերի նկատմամբ՝ 2008-2009թվականների համար:

Աղյուսակ 3

	2009թ		Ընդամենը	Խոշորներ	Մյուսները
1	Հարկատուների քանակը	հատ	81257	325	80932
2	Հավաքագրված հարկեր	մլն. դր	522362.2	287570	234792.2
3	Ստուգումների քանակը, առանց ՀԴՄ ստուգումների		17290	794	16496
4	Ստուգումներից առաջացած հարկեր, առանց ՀԴՄ ստուգումների *	մլն. դր	31272	6580.5	24691.5
5	Ստուգումների արդյունքում առաջադրված հարկեր/Հավաքագրված հարկեր	%	6%	2.3%	10.5%
6	Մեկ հարկատուից հավաքագրված հարկեր	մլն. դրամ	6.4	884.8	2.9
7	Յուր-յուր ստուգմամբ մեկ հարկատուին առաջադրված գումարը	մլն. դրամ	1.8	8.3	1.5
8	Յուր-յուր ստուգմամբ մեկ հարկատուին առաջադրված գումար/մեկ հարկատուից հավաքագրված հարկեր	%	28.1%	0.9%	51.7%

*ՀԴՄ ստուգումների արդյունքում առաջադրված հարկերը կազմել են 915.5 մլն դրամ:

2008թվականի համար ներկայացված են միայն վերջնական ցուցանիշները:Հաշվարկները կատարված են 2009թվականի ցուցանիշների մեթոդոլոգիայով և կրկին չեն ներառում ՀԴՄ ստուգումների արդյունքները, որոնց քանակը եղել է 6433 հատ, իսկ Ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարները՝ 457.45 մլն դրամ:

Աղյուսակ 4

2008թ	Չափի միավոր	Ընդամենը	Խոշորներ	Մյուսները
Ստուգումների արդյունքում առաջադրված հարկեր/Հավաքագրված հարկեր	%	6.7%	2.9%	11.0%
Մեկ հարկատուից հավաքագրված հարկեր	մլն. դրամ	7.6	1003.8	3.6
Յուրաքանչյուր ստուգմամբ մեկ հարկատուին առաջադրված գումարը	մլն. դրամ	4.6	15.5	1.8
Յուր-յուր ստուգմամբ մեկ հարկատուին առաջադրված հարկեր/մեկ հարկատուից հավաքագրված հարկեր	%	60.3%	1.5%	50.8%

Այստեղից հետևում է, որ ստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ գումարները/ վճարված հարկեր հարաբերակցությունը խոշոր հարկատուների մոտ 4 անգամ պակաս է , քան մյուս բոլոր հարկատուների մոտ: Ընդ որում, այդ տարբերությունը 2008թ 3.8 անգամից աճել է 4.6 անգամ 2009թվականին:

Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր ստուգմամբ մեկ հարկատուին առաջադրված գումարները համեմատած մեկ հարկատուից հավաքագրված հարկերի հետ, 325 խոշոր հարկատուների մոտ ոչ միայն, ավելի քան 50 անգամ պակաս է, քան մյուս հարկատուների մոտ, այլ նաև 2009թվականին, նախորդ տարվա համեմատ, այդ ցուցանիշը նվազել է

մոտ 40 տոկոսով: Այն դեպքում, երբ նշված ժամանակահատվածում, բոլոր մյուս հարկատուների մոտ այդ ցուցանիշը մնացել է գրեթե նույնը:

Աղբյուր: ՀՀ ԱՎԾ,
ՀՀ ԿԱ ՊԵԿ կայք էջ http://www.taxservice.am/index.php?menuID=18&tid=2&pid=&lng=9,
http://www.taxservice.am/index.php?menuID=295&tid=2&pid=&lng=9